

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԵՍՉՈՒԹԵՍՆ

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի
7 Յունիս 1998, Ամավերջի Հանդէս

Ամենապատիւ Տէր Թորգում Արք. Մանուկեան
Քարեխնամ Պատրիարք Ս. Աքոռոյ,
Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրեր,
Մեծայարգ Հանդիսականներ,

Շնորհիւ Ամենակալին Աստուծոյ, այս տարի եւս կը կանգնինք մեր դպրոցական ամավերջի հանդիսութեանց այս թեմին, ներկայացնելու համար Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի 1997-98 դպրոցական տարեշրջանի կրթական մշակութային եւ տնտեսական տեղեկատուութիւնը: Խոր գոհունակութեամբ կ'ընենք այս տեղեկատուութիւնը, անիկա խաղաղ, արդիւնաւոր կրթական աշխատանքի մը յայտարարն է: Սրբոց Թարգմանչաց Երկրորդական վարժարանը 1 Մետումբրի 1997-ին սկսաւ իր ուսման տարեշրջանը՝ 136 աշակերտ եւ 30 ուսուցիչներով: Վարժարանիս նախկին Տեսուչ՝ Հոգեշնորհ Հայր Սահակ Մաշալեանը, իր բարձրագոյն ուսումը շարունակելու նպատակով մեկնեցաւ արտասահման վերաբացումէն 16 օրեր յետոյ:

Պատրիարք Սրբազն Հօր տնօրինութեամբ ստանձնեցի տեսչական պաշտօնը, տնտեսութեան վարիչի պարտականութիւններու համատեղումով:

Պատրիարք Սրբազն Հօր յանձնարարութեամբ Հոգեշնորհ Հայր Շնորհ Գասպարեան նշանակութեցաւ աղօթքի պատասխանատու եւ կրօնի ուսուցիչ երկրորդական բաժնի մէջ: Սրբոց Թարգմանչաց Վարժարանը իր 70 տարիներու կեանքով կրթական ծրագրի եւ ուսուցման պատկանելի աւանդութիւն մը ստեղծած է Երուսաղէմի հայ իրականութեան մէջ, կը շարունակէ մնալ ազգային պանծալի այն հաստատութիւնը, որ կրօնական ու բարոյական խորին վրայ ազգային շունչով կը բրծէ հայ պատանիները, անոնց մէջ կը կերտէ ազնիւ նկարագիր եւ զանոնք կ'ընէ բարեկիրք մարդ եւ ճշմարիտ հայ: Ազգային տան լուսաւորութեան շահը կազմող կայծերէն մէկն է Սրբոց Թարգմանչաց Վարժարանը, որուն մէջ կը վառի ու կը բորբոքի հայուն վեհ նկարագիրն ու հոգին: Այս ոգին է որ կը ներշնչուի աշակերտներուն մէջ, ազգային, եւ եկեղեցական պատմութեան, գրաբար եւ աշխարհաբար լեզուներու եւ միւս բոլոր նիւթերուն ուսուցմամբ:

Ճշմարիտ է այն խօսքը. «Եկեղեցին է այն խարիսխը, որուն պէտք է փարի հայութիւնը, անոր մէջ իր փրկութիւնը գտնելու համար: Եւ եկեղեցին է այն նաւը, որ հայութեանը պէտք է հասցնէ անելոյթ եւ խաղաղ նաւահանգիստը, սակայն պէտք չէ մոռնանք որ եկեղեցւոյ նախագաւիրը՝ դպրոցն է»:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Այս տարի ունեցանք չորս ընդհանուր ուսուցչաց ժողովներ, գտնուեցան ներկայացուած հարցերուն լուծումներ, ընդունուեցան էական որոշումներ, նշդուեցաւ վարժարանիս բնականոն ընթացք:

Տեղի ունեցան ծնողաց-ուսուցչաց հանդիպումներ, որպէսզի ուսուցիչ եւ ծնողներ ուղղակի կապ հաստատեն աշակերտներու ուսման վիճակին մասին: Այս հանդիպումները առիթ կ'ընձեռնեն իւրաքանչիւր աշակերտին կարգապահական, հոգերանական եւ այլ վիճակներու շուրջը զրուցել իրենց ծնողներուն հետ եւ միասնաբար լուծումներ գտնել որոշ հարցերու շուրջ:

Մեր կրթական ծրագիրը այս տարի եւս ընթացաւ ըստ նախընթացի, աւանդուեցան հինգ լեզուներ, հայագիտական դասեր, կրօն, գիտութիւն, բնագիտութիւն եւ պատմութիւն:

Մարմնամարզութեան եւ երաժշտութեան դասերը կը շարունակուին, յայտնի է սակայն որ անքանարար են այս նիւթերուն յատկացուած դասապահերը, բայց շատ դժուար է հինգ լեզուներով խնողուած դասացուցակը աւելի եւս բեռնաւորել նոր դասապահերով:

Հակառակ խանգարող աղմուկին ուրախացուցիչ էր տեսնել ժառանգաւորաց Վարժարանի մեծ դաշտի նորոգութեան աշխատանքները, յուսալով իրականացման նաեւ վարժարանիս խաղաղաշտին նորոգութեանը, որը ներկայ անյարմար եւ անխնամ վիճակի պատճառով անհնարին է օգտագործել: Այս դաշտին նորոգութիւնը եւ գործածութեան դրուիլը ունի նաեւ ապահովութեան մեծ արժեք: Ժամը տասի դադարին աշակերտութիւնը ազատ կը մնայ եւ հսկողութեան մեծ հարց կը ծագի, երբեմն ալ ցած դասարաններու աշակերտները դուրս կ'ելլէին դպրոցի եւ վանքի տարածքներ, որը մեծ մտահոգութիւն կը յառաջացնէր թէ մեր եւ թէ ծնողներուն համար: Ուսուցիչներու կողմէ յօժարակամ հսկողութիւն սահմանուեցաւ զրուանքի պահերուն:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԵՌՆՍՐԿՆԵՐ

Այս տարուան մշակութային ձեռնարկներու առաջինը եղաւ թարգմանչաց Վարդապետաց տօնին առիթով պատրաստուած կոկիկ յայտագիրը, դպրոցական սեղմ շրջանակի մէջ: Օրուան տօնին մասին խօսք առաւ Հոգեշնորի Տէր Շնորհի Հայր Սուրբը: Աշակերտները օրուան յարմար երգերով եւ արտասանութիւններով յիշատակեցին սուրբերը:

Նոր Տարուան եւ Սուրբ Շննդեան տօներուն առիթով մեր աշակերտները ներկայացուցին Սուրբ Շնունդը հետեւելով նոր կտակարանին: Պատմութիւնը ներկայացնող դերակատարներուն կ'ընկերանար երգչախումբը հոգեւոր երգերով: Մեր աշակերտութեան ինչպէս նաեւ հանդիսականներուն համար գեղեցիկ ապրումներու երկնային ժամ մըն էր երկրի վրայ: Ներկայացուեցաւ բեմադրութեամբը եւ պատրաստութեամբը Տօֆք. Անուշ Նագգաշեանի. բեմադրութեան յաջողութիւնը գոհունակութեամբ գնահատուեցաւ Պատրիարք Միքայել Հօր եւ հոգեւոր դասին կողմէ:

Մարտ 26-ին, Մայրերու Օրուան առիթով մեր աշակերտները լաւագոյն ձեւով ներկայացուցին «Հայ Կինն Ու Մայրը Դարերու Ընդմէջէն» բատրերգութիւնը:

Բեմադրութիւնը կը սկսէր կնոջ վեհագոյն կերպար Աստուածամօր մեծարանինով։ Բեմադրութեան հեղինակը յաջորդաբար ներկայացուց մեզի հայ պատմութեան մէջ իրենց կեանքով եւ գործով առաջինացած հայ սրբուհիները, մայրերն ու բագուհիները, որոնք ներկայացուեցան ոչ միայն այդ ժամանակներու յատուկ տարագներով, այլեւ ներշնչեցին ներկաները այդ ժամանակի ոգիով։ Այս բացառիկ բեմադրութիւնները դրոշմուած կը մնան բոլորիս միտքերուն եւ սիրտերուն մէջ իրենց յատուկ շեշտով, ինչ որ ցոլացումն են Տօֆք. Անուշ նագգաշեանի բանաստեղծական շունչին։

Զատկական արձակուրդին երկրորդական բաժնի աշակերտութիւնը ունեցաւ շատ հետաքրքրական պտոյտ մը։ Այս առիթով անոնք ծանօթացան Սուրբ Գրքի հետեւողութեամբ Յիսուսի ապրած եւ գործած սրբավայրերուն։ Պտոյտը կ'առաջնորդուէր Սուրբ Գիրքի ընթերցումներով եւ բացատրութիւններով։ Ասիկա մեր աշակերտներուն համար եղաւ ուսուցողական եւ հանելի օր մը։

16 Մայիսին ունեցանք ձեռագործի մեր աւանդական պազարը, ուր ցուցադրուեցան մեր աշակերտուհիներուն ձեռագործի աշխատանքները։ Այս ցուցահանդէսը մեծ հետաքրքրութիւն գտաւ արժանանալով այցելուներու գնահատանքին։ Աշակերտուհիներուն բծախնդրօրէն պատրաստած ձեռագործները, իրենց ուսուցչուհիներուն՝ Տիկին Ս. Անքառամ Գարակէօզեանի եւ Օրիորդ Ազնիւ Պահտասարեանի հսկողութեան եւ վարպետ ցուցմունքներուն տակ հիացում պատճառեցին։ Կը շնորհաւորենք մեր ուսուցչուհիներն ու աշակերտուհիները այս յաջող ցուցհանդէսին համար։

Ինչպէս նախորդ տարիներուն այս տարի եւս Թարգմանչացի մեր աշակերտները կատարեցին իրենց եկեղեցական պարտականութիւնները, կանոնաւոր կերպով մասնակցելով տօնական արարողութիւններուն ու թափօրներուն։ Եկեղեցական երգեցողութեան պատասխանատուն՝ Պրճ. Վարուժան Մարգարեանը ինչպէս միշտ սիրայօժար կատարած է երգեցողութեան ուսուցումը, շնորհակալութիւն իրեն աստուածահան այս գործին համար։

Անցեալ շաբաթ 30 Մայիս 1998-ին ունեցանք մեր մանկապարտէզի շատ սիրալիր հանդէսը։ Հինգ փոքրիկներ բոլորեցին իրենց մանկապարտէզի տարիները եւ բարձրացան նախակրթարանի առաջին դասարանը։ Այս ուրախալի հանդէսը յոյժ տպաւորիչ էր, շատ լաւ պատրաստուած եւ կազմակերպուած։ Այս ծաղկաբոյր հանդէսը կը պարտինք մանկապարտէզի մեր ուսուցչուհիներուն Օրիորդ Այրին Գարանեանին եւ Օրիորդ Սուսան Միրզոյեանին՝ որ է նաև մանկապարտէզի երգի ուսուցչուհին։

Պատրիարք Սրբազն Հօր հովանաւորութեամբ եւ նիւթական նպաստովը ինչպէս անցեալ տարի այս տարի եւս ունեցանք մեր դպրոցական տարեգիրքը «Օրերն Ուկի», ուր կը տեսնենք մեր աշակերտներուն վերջին տարուան գործունեութիւնները։ Խմբագրական աշխատանքը ըրաւ Տօֆք. Անուշ նագգաշեանը, իրեն աշակից ունենալով Տիկին Ս. Արքինէ նագգաշեանը։ Տարեգիրքի ձեւաւորումն ու նկարագարդումը կատարեց Հոգշնորի Հայր Ընծանուէր Բարախանեանը։

G.C.E. Examinations- Անգլիական Քննութիւններ

Անցեալ տարի ունեցանք ուր շրջանաւարտներ, որոնցմէ եօթը եւ այս տարուան շրջանաւարտներէն ուրը մասնակցած էին 1997 տարւոյ անգլիական G.C.E.-ի քննութեանց, որոնցմէ ոմանք անցած են 10 նիւրի մէջ, ոմանք 8, եւ ոմանք 6 նիւրի մէջ:

Վարժարանս այս տարի եւս իրագործեց իր ուսումնական ծրագիրը, միշտ նկատի ունենալով Անգլիական Քննութիւնները: Տարիներու փորձառութիւն ունեցող մեր ուսուցչական կազմը, Պրե-նդիա Տիգրանեանի բժախնդիր հսկողութեան տակ այս տարի եւս պատրաստեց մեր աշակերտները այդ ուղղութեամբ:

Այսօր մեր վարժարանի աւարտական 11-րդ դասարանի 11 աշակերտները կ'արժանանան վկայականներու, որոնք հետեւեալներն են.

Անժելա Մարելոսեան	Մարալ Ճամպազեան
Մարալ Ճամպազեան	Մարութիւնսեան
Մարիա Աւետիսեան	Մարտին Նալպանստեան
Մարո Գեորգիսեան	Ռուբեն Նալպանստեան
Քերի Պաքըրնեան	Սողոմոն Թագաւորեան

Յարութ Գալյայնեան
Յարութ Պաղամեան
Նանք Նալպանստեան
Ռուբեն Նալպանստեան
Օհան Նանարեան

Այս շրջանաւարտները ինչպէս նաև մեր երկրորդական 10-րդ դասարանի աշակերտները մասնակցեցան անգլիական G.C.E.-ի միջազգային քննութեանց, որոնց արդիւնքները պիտի ստանանք յառաջիկայ Սեպտեմբեր ամսուն:

*

* * *

Այժմ կը ցանկամ մեր շնորհակալութիւնները բերել այն անձերուն, որոնք Սրբոց Թարգմանչաց վարժարանի համար ունին իրենց ներդրումները:

Ամենապատիւ Տէր, հանեցէք ընդունի իրրեւ անկեղծ հաւաստիք մեր երախտագէտ զգացումները: Զեր հայրական այն մեծ խնամքն ու հոգածութիւնը որ միշտ կը տածէք մեր վարժարանին, ընդմիշտ անշնչելի պիտի դրոշմուի հայ մանուկներու երախտագիտութեամբ զեղուն հոգիներուն մէջ:

Շնորհակալութիւն Հոգեշնորի Հայր Շնորհի Ծ. Վրդ. Գասպարեանին, որը խղճի մտօք կատարեց իրեն վրայ դրուած պարտականութիւնները:

Երախտագիտութեան խօսք կը յղենիք օծակից եղբօրս՝ Հոգեշնորի Տէր Ընծանուէր Արդ. Բարախանեանին, որն իր պատրաստակամութեամբ եւ գեղարուեստական ձիրքով յարդարեց հանդէսներու բեմը եւ ձեւաւորեց տարեգիրքը: Շնորհակալութիւն Հայր Սուրբին:

Այսօր տեղին է արդար գնահատանքով յիշել փոխեսուչ՝ Պրե-նդիա Տիգրանեանին հանելի բայց եւ յոգնատանց աշխատանքը: Վարժարանի ուսումնական աշխատանքները մեծ հետեւողականութեամբ, հաստատուն վեռակամութեամբ առաջ կը տանի, իր գործին կատարելապէս ձեռնիաս սիրելի Պրե. Եղիան՝ վարժարանիս ողնաշարն է: Կը մաղբենք որ Աստուած իրեն միշտ առողջ եւ եռանդուն պահէ:

Պրճ. Յարութիւն Պետրոսեանը ընդհանուր հսկողն է տղաներուն եւ Տիկին Արշալոյս Եագուպիանը՝ աղջիկներուն ինչպէս նաև դպրոցի ժարտուղարուիին է, իրենք մեծապէս դիւրացուցին մեր բեռը դպրոցը կառավարելու դժուար գործին մէջ: Անոնք պատկառանք ու ակնածանք՝ կը ներշնչեն աշակերտներուն մէջ, գիտեն պահանջել, ներողամիտ ըլլալ մանկական, պատանեկան սխալներու հանդեպ, կը վայելեն բոլորին յարգանքն ու համակրանքը, երախտապարտ ենք իրենց:

Ծնորհակալ ենք մեր բոլոր ազգային բարերարներուն, որոնք չմոռցան Թարգմանչացը զանազան առիթներով եւ տուին իրենց սիրոյ նուէրները:

Մասնաւորապէս պարտք կը զգամ յիշելու Ամերիկայի մեր Սրբոց Թարգմանչաց վարժարանի Սանուց Միութիւնը, որ զանազան առիթներով նուիրատուութիւններ կը կատարէ: Մեր աշակերտներու Կաղանդի նուէրները եղան անոնց միջոցներով: Այսօրուան հանդէսին համար եւս իրենք հաստատած են դրամական մրցանակներ յառաջադէմ աշակերտներու համար: Խորապէս շնորհակալ ենք:

Ծնորհակալութիւն Տէր եւ Տիկին Վահագն եւ Յասմիկ Յովնանեաններուն որոնք կրթական հիմնադրամ մը հաստատեցին նուիրելով 5000 ամերիկան տոլար, ի յիշատակ Տիկին Յովնանեանի Հօր՝ Թարգմանչաց Վարժարանի բազմամեայ ուսուցիչ Սեդրակ Պաղտոյեանի:

Երախտագիտութեամբ կը յիշենք Գալուստ Կիւլպէնկեան հաստատութիւնը, որ ամէն տարի շօշափելի գումար մը կը յատկացնէ վարժարանիս համար. այս տարի եւս ստացանք իրենց օգնութիւնը:

Իր գոյութեան եւ յարատեւման համար Թարգմանչաց Վարարանը պարտական է Սրբոց Յակոբեանց Միարանութեան: Ուժ եւ կորով կը մաղթենք մեր միարանակից եղրայրներուն, շնորհակալութիւն Պատրիարքարանիս Ելեւմտից Տեսուչ Գերաշնորհ Տէր Սեւան նպա-Ղարիպեանին, իր գործակցութեան համար:

Այսօր վարժարանիս ուսուցիչ-ուսուցչուիիները կը հրենուին Եերքին գոհունակութեամբ եւ արդարացի պարծանենքով կը նային իրենց շրջանաւարտ սաներուն: Այո՛, ֆիշ չեն Թարգմանչաց վարժարանի աշակերտի հոգու մէջ ժախտի ու բերկրութեան շատրուան բացող հանդարտ եւ մեղմնաբարոյ ուսուցիչները, որոնք իրենց հանելի ու մտերմիկ կեցուածքով կարծես բանալի են որոնք կը բանան աշակերտին սրտին դուռը եւ աշակերտը կը լսէ անոր հոգին ձայնը:

Մեր ուսուցիչներուն կը մաղթենք Յորին համբերութիւնը, առաւել տոկուն կամք, շարունակելու համար իրենց նուիրական առաքելութիւնը:

Ծնորհակալութիւն Տօֆք. Անուշ Նագգաշեանին, որպէս մշակութայինի պատասխանատու, իր կատարած ձեռնարկները արժանի են ամէն գնահատանքի, ան շանացեր է ստեղծել ազգային մտածումի եւ զգացումի միջավայր, կրօնարոյր եւ ազգաշունչ մթնոլորտ:

Ծնորհակալ ենք մեր երաժշտութեան ուսուցչուի Տիկին Նուևէ Պօղոսեանին, որ ոչ միայն կը սորվեցնէ այլ նաև կը նուագակցի ու կը նոխացնէ մեր հանդէսները:

Խորապէս շնորհակալ ենք Վարժարանիս վաստակաւոր ուսուցչուի Տիկին Արքիին Նագգաշեանին, հանդէսներուն եւ տարեգիրքին պատրաստութեան իր ցուցաբերած սրտանց մասնակցութեան համար, ան կ'ընէ որպէս նուիրական պարտականութիւն, առանց գնահատանքի ակնկալութեան, կը մաղթենք իրեն առողջութիւն եւ երկար կեանք:

Մեր բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որոնք պատրաստ են օգնելու վարժարանիս բոլոր ձեռնարկներուն, շնորհակալութիւն կը յայտնենք, իրենց արդար իրաւունքն է բաժնել Թարգմանչացի յաջողութեան փառաւոր պասակը: Զեր վարձքը կատար, սերունդներ երախտապարտ պիտի մնան ձեր նուիրումին:

Սիրելի Շրջանաւարտներ:

Ս. Թարգմանչաց Վարժարանի յարկի տակ ձեր ուսումնառութիւնը աւարտուեց: Զեզ համար հասաւ այն օրը, որ կ'երազէիք ձեր մանկապարտէզի տարիներէ ի վեր: Զեր կեանքի այս դարձակէտը նշանաւոր է գիտելիքներու ամբարումով:

Տկար է մարդը, սահմանափակ կարողութիւններով, մեր բաղանքն է շատցնել, խորացնել ձեր կարողութիւնները: Կեանքի մէջ հեռու կեցէք համբաւներէ ու ցուցամոլութենէ, եղէք ծայր աստիճան համեստ: Արդիական պահանջներու հետ միշտ պահեցէք հայեցի նկարագիրը, եղէք տէրը հայ գերդաստանի, անոր արեան ժառանգորդները: Յարգել տուէք ձեզ, դրանով իսկ՝ յարգել տուէք մեր ժողովուրդը: Երբեք յանցաւոր չ'ըլլաք ձեր խոնին, Աստուծոյ եւ մարդոց առջեւ:

Տեսութեան, ուսուցչական կազմի եւ բոլոր ներկաներու անունով կը շնորհաւորեմ Ձեզ եւ ձեր ծնողները: Կը մաղթենք երջանկութիւն եւ ամենայն բարիք: Աստուծոյ Աշը Ձեզ միշտ հովանի ըլլայ:

Թէոդորոս Արդ. Զաքարեան
Տեսուչ

-19-

Մեծ թագաւոր մըն էր
շատ իմաստուն,
Սուրբ քաղաքին մէջ
շինեց Աստուծոյ տուն:

Առդումնեզ, որ կառուցեց Երաւաղէմի տաճարը
(Գ. Թագաւորաց Զ. 1, 37-38)

-20-

Բանալին՝ լաթէն,
Դուռը՝ ջուրէն,
Ո՞ր մարգարէներն անցան մէջէն:

Եղիսէ ու Եղիա
(Դ. Թագաւորաց Բ. 8)

-21-

Լոյս աշխարհ եկաւ,
Մահը չոեսաւ,
Երկինքը փնտոէ,
Անունը ըսէ:

Եղիա
(Դ. Թագաւորաց Բ. 11-12)